

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Պաշտոնի(զբաղմունքի) անվանումը	Ֆիզկուլտուրայի ուսուցիչ (մարզիչ)
Դերը	<p>Ֆիզկուլտուրայի ուսուցիչը (մարզիչը) անցկացնում է ֆիզկուլտուրայի դաս (մարզում) հանրակրթական դպրոցում, նախադպրոցական և արտադրական հիմնարկներում:</p> <p>Մարզում է՝ սկզբնական պատրաստության և ուսումնամարզական խմբերում, ինչպես նաև օգնում բարձրակարգ մարզիկներ պատրաստող մարզիչներին: Կազմակերպում և անցկացնում է միջոցառումներ (ներդպրոցական, ներխմբակային և այլն), ինչպես նաև մարզական մասսայական միջոցառումներ: Մշակում է ուսումնական ծրագրեր, աշխատանքային պլաններ, դասի պլան կոնսպեկտ և այլ ուսումնական օժանդակ փաստաթղթեր: Նախապատրաստում է ընդհանուր ֆիզիկական պատրաստության (ԸՖՊ) վարժությունների համալիրներ՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան շարժողական ընդունակություններ:</p> <p>Ֆիզկուլտուրայի ուսուցիչը վերահսկում է տարբեր առաջադրանքների կատարման բովանդակությունը, գնահատում մշակված առաջադրանքները:</p> <p>Ուսուցիչը (մարզիչը) կազմակերպում, անցկացնում և ղեկավարում է ուսումնադաստիարակչական և ուսումնամարզական գործընթացը՝ խրախուսելով սովորողների (մարզվողների) ձեռքբերումները և հաջողությունները:</p> <p>Վերահսկում է սովորողների (մարզվողների) գործունեությունը դպրոցից (մարզադպրոցից) դուրս:</p> <p>Նա պատրաստում և վարում է զեկուցումներ (առողջություն և անձնական հիգիենա, օլիմպիզմ, սպորտ և այլ թեմաներ): Կատարում է բովանդակությամբ հարակից պարտականություններ՝ ղեկավարելով հիգիենիկ մարմնամարզության, արտադրական մարմնամարզության, ամառային ճամբարների, բակային ճամբարների գործունեությունը:</p> <p>Մշակված ուսումնական փաստաթղթերի հիման վրա հաշվառում և ամփոփում է ընթացիկ ծրագրային առաջադրանքը:</p>
<u>Խնդիրների բնագավառ 1.</u>	Սովորողների (մարզվողների) առողջության ամրապնդում և պահպանում, ճիշտ կեցվածքի ձևավորում, ներդաշնակ ֆիզիկական զարգացման ապահովում:
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Առավոտյան հիգիենիկ մարմնամարզություն, • առողջարարական համալիր վարժությունների կիրառում, • հատուկ վարժությունների օգտագործում ճիշտ կեցվածքի ձևավորման համար, • ուժի, ձկունության, ճարպկության, արագաշարժության և դիմացկունության վարժությունների կիրառում, • առողջարարական վարժությունների ընթացքի հսկում և ինքնահսկում:
Կատարման	Կարողանալ ճիշտ ընտրել և չափավորել ընտրած

չափանիշները	վարժությունների համալիրները (քանակությունը, կրկնությունների չափը, կատարման արագությունը, լայնույթը, տեմպը, ռիթմը և այլն):
<u>Խնդիրների բնագավառ 2.</u>	<ul style="list-style-type: none"> • Բարձր աշխատունակության ապահովում, • շարժողական ընդունակությունների մշակում (ուժ, ձկունություն, ճարպկություն, արագաշարժություն և դիմացկունություն), • ֆիզիկական վարժությունների պարբերաբար պարապելու պահանջմունքի ձևավորում, • շարժողական հմտությունների ձևավորում և կատարելագործում:
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Սովորողների տարբեր օրգան համակարգերի գործառնությամբ հնարավորությունների բարձրացում, • դասի խնդիրներից ելնելով ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստության մակարդակի ապահովում, • շարժողական հմտությունների ձևավորում և կատարելագործում ըստ մարզածների:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Դասի համապատասխան մասերում բեռնվածության և հանգստի չափավորում, • հենվելով ընդհանուր ֆիզիկական պատրաստության (ԸՖՊ) աստիճանի վրա ձևավորել հատուկ ֆիզիկական պատրաստություն (<ՖՊ), • շարժողական կարողությունների մշակված հենքի վրա ձևավորել, ամրապնդել և կատարելագործել առանձին շարժողական հմտություններ:
<u>Խնդիրների բնագավառ 3.</u>	<ul style="list-style-type: none"> • Բարոյական հատկանիշների, • ֆիզիկական վարժություններով պարբերաբար պարապելու պահանջմունքի, • անհատների և կոլեկտիվների հետ շփվելու կարողությունների դաստիարակում,
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Բարոյական հատկությունների` պատասխանատվության, հաստատակամության, ընկերասիրության, փոխօգնության, հանդուրժողականության և այլ հատկանիշների դաստիարակում, • նպաստել սովորողների սպորտային կողմնորոշմանը, • նախապատրաստել և կազմակերպել` զրույցներ, հասարակական զանգվածային միջոցառումներ, հավաքույթներ, կուլտարշավներ, սպորտային միջոցառումներ և այլն:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Խրախուսել սովորողների (մարզվողների) ձեռքբերումները և հաջողությունները, • հայրենասիրության և հայրենիքի նկատմամբ պարտքի զգացողության արտահայտում, • բնության և մշակութային կոթողների հետ սովորողների վերաբերմունքի մշակում, սեր բնության և շրջապատի նկատմամբ:
<u>Խնդիրների բնագավառ 4.</u>	<ul style="list-style-type: none"> • Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, անձնական հիգիենայի, կոփման կանոնների, օլիմպիական շարժման, հսկողության և ինքնահսկողության վերաբերյալ գիտելիքների ձեռք բերում, • կարողանալ` կազմել ուսումնական և մարզական

	<p>փաստաթղթեր, մատենավարություն, արձանագրություններ լրացնել և օգտվել ուսումնամեթոդական գրականությունից,</p> <ul style="list-style-type: none"> կարողանալ օգտվել և մասնագիտության մեջ կիրառել մանկավարժական և բժշկական վերահսկողության պարզագույն մեթոդներից:
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> Անձնական հիգիենայի և օրվա ռեժիմի, կոփման կանոնների, հիգիենիկ մարմնամարզության, օլիմպիական շարժման, հսկողության և ինքնահսկողության մասին գիտելիքների հաղորդում, կազմել ծրագրեր և ուսումնամարզական միջոցառումների փաստաթղթեր, օգտվել համապատասխան մասնագիտական գրականությունից, մանկավարժական և բժշկական վերահսկողության կազմակերպում:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> Անձնական հիգիենայի և օրվա ռեժիմի, կոփման կանոնների, հիգիենիկ մարմնամարզության, օլիմպիական շարժման, հսկողության և վերահսկողության մասին զեկուցումներ, ուսումնական աշխատանքների հաշվառում և ամփոփում, մանկավարժական և բժշկական հսկողության թեստավորում:
Պատասխանատվությունը- բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	
Պատասխանատվությունը	Պատասխանատու է ծրագրային նյութի իրագործման, դասերի (մարզումների) կազմակերպման և անցկացման, սովորողների անվտանգության ապահովման, դասի խտության ապահովման համար:
Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ, վերաբերմունքը	
Լեզուները	Երկու լեզու (ռուսերեն, անգլերեն կամ ֆրանսերեն)
Համակարգիչը	տիրապետի «վորդ» և «էկզել» ծրագրերին, կարողանա օգտվել ինտերնետից:
Գիտելիքներ	հասարակագիտական, բնագիտական և մաթեմատիկական
Կարողությունները, հմտությունները, վերաբերմունքը	ունենա համապատասխան մասնագիտական հմտություններ, կարողանա հեշտությամբ հաղորդակցվել սովորողների և գործընկերների հետ: Լինի ազնիվ, աշխատանքին նվիրված, գործունյա, ստեղծագործող: